ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՎԱՂ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Ս. Ա. ԵՍԱՅԱՆ

Սյունյաց լեռնաշխարհի այս հատվածը հնագիտական տեսակետից վատ է ուսումնասիրված։ Եթե չհաշվենք մի քանի հետախուզական պեղումները և պատահական գյուտերը, Զանգեզուրը տակավին սպիտակ շրջան է Հայաստանի հնագիտական քարտեզի վրա։

Վերջին տարիներին Զանգեզուրի և Հարևան Վայոց ձորի լեռներում հայտնաբերվել են հազարավոր ժայռապատկերներ, որոնք վերաբերում են Հայաստանի նախնագարյան հասարակության պատմությանը, մշակույթին, մոգական և բնապաշտական պատկերացումներին, մ. թ. ա. V—I հազարամյակի արվեստին[1]։ 1966 թ. Սյունիքում հայտնաբերված ժայռապատկերները զբաղեցնում են մի քանի տասնյակ կիլոմետր։ Այդպիսիք կարելի է հանդիպել Սիսիանի, Ազիզբեկովի և Եղեգնաձորի շրջաններում՝ Ծղուկ լեռան, Ուղտասարի փեշերից դեպի Վարդենիսի լեռնաշղթայի լանջերը ձգվող քարաշեղջերում։ Սյունիքի միայն այս շրջաններում հայտնաբերվել են շուրջ 5000 նկարազարդ քարեր։ Սյունյաց լեռնաշխարհի ժայռարվեստի խոշոր օջախներից է Սիսիանից 30 կմ հեռավորության և ծովի մակերևույթից 3300 մ բարձրության վրա գտնվող Ուղտասարը, ուր ավելի քան 2000 քարերի վրա պահպանվել են ժայռափոր պատկերներ։ Դրանք հիմնականում գծային և ծավալային են։ Անաղարտ վիճակում մեզ հասած ժայռապատկերներում ներկայացված են Հայաստանի հնագույն ժամանակների կենդանական աշխարհի բազմազան ներկայացուցիչները, նախնադարյան մարդու կյանքի դրվագները՝ որսի զանազան տեսարաններով։ Նախնադարյան մարդը ժայռաբեկորների վրա պատկերներ դրոշմելիս հաճախ ստեղծել է որոշակի կոմպոզիցիոն հորինվածք, որը համապատասխանում է նրա դիտողական կարողությանը և աշխարհընկալմանը։ Նաև հանդիպում են պաշտամունքային արարողություններ, ծիսական և խմբական պարի տեսարաններ։ Նախնադարյան մարդը ժայռերին փորել է իր տիեզերական պատկերացումների, արևի պաշտամունքի հետ լծորդվող, ինչպես նաև ոճավորված, դժվար մեկնելի պատկերներ, որոնք տակավին սպասում են իրենց մեկնությանը։

Շատ հետաքրքիր են նաև պեղումներից հայտնաբերված նյութերը, որոնք չնայած իրենց սակավությանը, հնարավորություն են տալիս պնդել, որ Զանգեզուրը իր արժանի տեղն է գրավել Հայկական լեռնաշխարհի մշակույթի զարգացման գործում։ Դրա մասին են վկայում ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի 1950—1951 թթ. արշավախմբի նյութերը՝ հայտնաբերված Սիսիանի շրջանից Մ. Հասրաթյանի ղեկավարությամբ[2]։ Աշխատանքները հիմնականում կատարվել են Ախլաթյան, Անգեղակոթ գյուղերում և Սիսիանում։

---

1 Գ. Հ. Կարախանյան, Պ. Գ. Սաֆյան, Սյունիքի ժայռապատկերները, Երևան, 1970։

2 Չհրատարակված այդ նյութերին ծանոթանալու հնարավորության համար մեր շնորհակալությունն ենք հայտնում Մ. Ս. Հասրաթյանին։

Ախլաթյանում գտնված նյութերից ուշագրավ է մ. թ. ա. III հազարամյակի վերջի և մ. թ. ա. II հազարամյակի առաջին կեսի խեցեղենը, որը Զանգեզուրում առաջին անգամ է հանդիպում։ Պեղումները կատարվել են Այրի գետակի ձախ ափին գտնվող Ջաղացի գլուխ կոչվող բլրի վրա, որի կեսից ավելին կործտնվել է 1915 և 1931 թթ. երկրաշարժերի ժամանակ։ Բլրի պահպանված մասում, մակերեսի վրա և կտրվածքներում հայտնաբերվել է հիանալի փայլեցված, մ. թ. ա. III հազարամյակի վերջով թվագրվող մեծ քանակությամբ սև գույնի խեցեղեն։ Նույն տեղից գտնվել են մ. թ. ա. II հազարամյակի առաջին կեսի միագույն և բազմագույն զարդերով, ալիքաձև գծերով, բազմաշարք ոլորապտույտներով անոթների բեկորներ։ Այս խեցեղենն իր զուգահեռներն ունի Նախիջևանի Կարմիր վանքում, Կարմիր-բերդում (Թաղաքենդ) և ժամանակի այլ հուշարձաններում։ Այստեղ գտնվել է նաև գծիկներով զարդարված խեցեղենի և սև խեցեղենի բեկորներ, որոնք զարդարված են կարճ գծիկներով, որպիսիր հայտնի են Ուզերլիկ Թեփերի պեղումներից։ Նույն բլրի վրա պահպանվել են մի քանի դոլմենաձև դամբարաններ։ Այդպիսիք բացվել են նաև մի քանի տասնյակ մետր հեռավորության վրա գտնվող մի այլ բլրի վրա։ Այդ բլուրներում պեղված դամբարանները ունեն մոտ 5 մ երկարություն, մոտ 2 մ լայնություն և 1,5 մ խորություն, ծածկված են մեկ կամ մի քանի սալերով։ Պեղված դամբարաններից ամենահետաքրքիրը № 1 էր, որտեղ թաղվել է մի ընտանիք, որի մի քանի անդամները եղել են բրոնզագործ վարպետներ։ Դիակների հետ թաղվել են քարե սանդեր, հալոցներ և ձուլման կաղապարներ, որոնց վրա պահպանվել են մետաղի հետքեր։ Բացի դրանից՝ դամբարանում գտնվել են բրոնզե ունելի, երկաթե նիզակ, բրոնզե ճարմանդներ, տարբեր տեսակի ուլունքներ։ Մյուս դամբարաններում գտնվել են տարբեր տեսակի ատամնավոր և հարթ ապարանջաններ, ակնոցաձև և տանձաձև կախիչներ, երկաթե դանակներ և նիզակներ։ Հայտնաբերվել են նաև խեցեղեն իրեր, որոնցից ուշագրավ են Դավիթ-Բեկում գտնված անոթների նման կանթեր ունեցող սկահակներր և ձիու գլխի ձև ունեցող անոթի բռնակը։ Նշված նյութերը թվագրվում են մ. թ. ա. I հազարամյակի սկզբով և կեսով։ Ուշագրավ նյութեր են հայտնաբերվել Անգեղակոթ գյուղից Շաքի և Բաղարչայ տանող ճանապարհի եզրին գտնվող դոլմենաձև դամբարաններում և դամբանաբլուրներում, որոնց մի մասը ավերվել է ճանապարհաշինության ժամանակ։ Տեղացիները գտել են տարբեր զոտիների բեկորներ, բրոնզե դաշույններ և ուլունքներ։ Պեղումները ցույց տվեցին, որ դամբարանների մի մասը կառուցումից հետո միջանկյալ պատով բաժանվել է երկու մասի, կրկնակի թաղում կատարելու համար։ Գտնված նյութերի մեջ կան բրոնզե և երկաթե դաշույններ, երկաթե նիզակներ, դանակներ, նետասլաքներ, նեղ թիթեղից պատրաստված գոտիներ, բրոնզե դուր. կավե և քարե իլիկի գլուխներ և այլ նյութեր։ Հետաքրքիր են նաև գտնված զարդերը՝ սերդոլիկից և ապակու շաղախից պատրաստված ուլունքներ, տարբեր կախիկներ, որոնց մեջ առավել ուշագրավ է սակրաձև կախիկը, որը չափազանց հազվադեպ է Անդրկովկասի հուշարձաններում, ինչպես նաև տարբեր ապարանջաններ, ուլունքներ և այլ նյութեր։ Այդ նյութերը թվագրվում են մ. թ. ա. II հազարամյակի վերջով I հազարամյակի կեսերով։ Նման մենհիրատիպ և դոլմենատիպ դամբարաններ հայտնի են նաև Ղոշուն-Դաշում, ուր գտնվում է առ այսօր չուսումնասիրված նույն ժամանակաշրջանի հիանալի պահպանված բնակատեղին։

Վերջին վայրը, ուր կատարվել են հիմնական պեղումները, Սիսիան-Աղուդի տանող ճանապարհի մոտ, Սյունիք ամրոցից ոչ հեռու գտնվող դամբարանադաշտն է։ Այստեղ բացի հին դամբարաններից կան նաև միջնադարյան գերեզմաններ, որոնցից մեկում գտնվեցին տարբեր հասակի և սեռի 36 մարդկանց կմախքներ՝ քարե բարձերով։ Սյունիքի դամբարանադաշտի այս և այլ դամբարաններում գտնվել են բրոնզե տարբեր նետասլաքներ, Սևան-ղարաբաղյան տիպի երկու բրոնզե դաշույններ, բրոնզե նիզակներ, ապարանջաններ, ճարմանդներ, ուլունքներ, ոսկրե կախիկներ և այլ նյութեր, ինչպես նաև տարբեր կավանոթներ, որոնց բռնակների մի մասը թռչունների գլխի ձև ունի։ Հատկապես հետաքրքիր է փափուկ կոշիկ հագած մարդու ոտքի ձև ունեցող կավե կախիկը, որը նմանվում է Ջարխեչում գտնված բրոնզե շերեփի կանթերին։

Այստեղ գտնված, ինչպես և մյուս դամբարանադաշտերի նյութերը, թվագրվում են մ. թ. ա. II հազարամյակի վերջով և I հազարամյակի կեսերով։

Զանգեզուրի նյութական մշակույթը ուսումնասիրելու համար մեծ նշանակություն ունեն 1952 թ. պատահականորեն ի հայտ եկած Սիսիանի շրջանի Տոլորս գյուղի դամբարանաբլուրի նյութերը, որոնք հրատարակվել են Հ. Մնացականյանի կողմից[3]։ Դամբարանաբլուրը 5,4×2,6 մ² չափսի քարերով պատված գերեզմանափոս է, ուր կան հինգ մարդու կմախք և ոչխարի, խոզի ու խոշոր եղջերավոր կենդանիների ոսկորներ։ Դամբարանաբլուրը հիշեցնում է Ղարաբաղի, Լճաշենի, Կիրովականի և այլ հայտնի ցեղապետերի դամբարանները։ Այս տեսակետից ճիշտ է Հ. Մնացականյանի այն կարծիքը, որ Տոլորսի դամբարանաբլուրը անկասկած պատկանել է տեղական ցեղային առաջնորդներից մեկին։

Դամբարանում հայտնաբերվել են ծակոտկեն գլխիկներով երկու բրոնզե դաշույն և ծայրերը դեպի վեր ծռված երեք դանակ։ Գտնվել են նաև նշված ժամանակում լայնորեն տարածված տերևաձև պոչուկավոր ինը նետասլաքներ։ Դամբարաններից հայտնի են մեծ քանակությամբ զարդեր, որոնց թվում՝ ցուլի գլխակերպ բրոնզե գավազանը (նկ. 1), եղջերուի բրոնզե արձանը (նկ. 2) և բազմաթիվ բրոնզե և ոսկե կախիկներ, ուլունքներ և այլն։

Տոլորսի հավաքածուն սերտ առնչվում է Ղարաբաղի, Սևանի ավազանի, Վարդենիսի ժամանակակից այլ հուշարձանների նյութերի հետ։

Այսպես, չափազանց հետաքրքիր է եղջերուի արձանը, որն իր նմանները ունի Լճաշենում և Արթիկում։ Այն ունի պաշտամունքային նշանակություն, այդ մասին են վկայում վզի օղակները։ Պաշտամունքային նշանակություն ունի նաև նշված գավազանի գլուխը, այդպիսիք կան Առաջաձորում, Գեղաբևկում և Ղալաքենդում։

Գտնված ոսկե զարդերը զուգահեռներ ունեն Լճաշենի գամբարաններից գտնված նմանօրինակ նյութերի մեջ։ Զանգեզուրի նյութական մշակույթի և Հայաստանի այլ վայրերի հուշարձանների կապի մասին է վկայում նաև բրոնզե կեռիկը, որը հայտնի է Ղարաբաղից, Կիրովականից, Արթիկից, Թարիայից և այլ վայրերից[4]։ Այդ տեսակետից հետաքրքիր է նաև խնցեղենը, որն իր զու-

[3] Հ. Օ. Մնացականյան, Новые находки предметов бронзового века в селении Толорс (в Зангезуре) Армянской ССР. Краткие сообщения Института истории материальной культуры вып. LIV, 1954.

[4] Ե. Լալայան, Դամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 105; Т. С. Хачатрян, Комплекс бронзовых изделий из селения Вардакар (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1961, № 3, նկ. 6)։

գահնոներն ունի Սանահինի, Սևանի, Կիրովականի, Դիլիջանի և այլ վայրերի նյութերի մեջ։

Բազմաթիվ նյութեր են գտնվել (1961 թ.) Սիսիանի շրջանի Լծեն գյուղում պատահականորեն բացված կիսավեր դամբարանից և այժմ պահվում են Գորիսի դավառագիտական թանգարանում։

Լծենի դամբարանից հայտնաբերվել է սև փայլեցված կավե ճոքավոր կոշիկ, որի վերին մասում կան կլոր բռնակներ։ Նման կոշիկները լավ հայտնի են և գտնվել են Կարմիր վանքում, Լճաշենում, Կարմիր-բլուրում, Մինգեչաուրում, Դավիթ-Բեկում։ Մենք 1969 թ. նման «կոշիկի» բեկոր ենք գտել Իջևանի շրջանի Աչաջուր գյուղի մոտ՝ Թմբատիր ամրոցի պեղումների ժամանակ։ Հայտնաբերվել են նաև սև փայլեցրած տարբեր անոթներ և լայնացող հատակով մեկ մեծ գավաթ։

Խեցեղեն իրերից բացի Լծենում գտնվել են մետաղե իրեր՝ եղջերուների ձուլածո արձանիկներ, բրոնզե տափակ կացին, ձիու ճարմանդներ, կոճակներ և այլն։

Լծենից և Տոլորսից գտնված նյութերը լավ համադրվում են Ղարաբաղի, Թելշերաինի նախաուրարտական շերտի, Կիրովականի և մ. թ. ա. II հազարամյակի այլ հուշարձանների նյութերի հետ։

Շինուհայր տանող ճանապարհի շինարարության ժամանակ բացվեցին դամբարանների և բնակատեղիների հետքեր։ Գտնված նյութերը, ցավոք, ոչնչացվել էին, բացի մի փոքրիկ քարե անիվից, որը հանձնվել էր Գորիսի գավառագիտական թանգարանին։ Դիտումների ժամանակ գտնվեցին՝ կարմիր կրաքարե սանդ (նկ. 3), բազալտե սանդակոթ, եռանկյունաձև քարե կամ (նկ. 4) հարթ աշխատանքային մասով։ Կամի առջևի նեղ մասում կա ակոսիկ՝ պարանն ամրացնելու համար։ Քարե կամը միակ լավ թվագրվող իրն է։ Իր ձևով այն նման է Լճաշենի դամբարանաբլուրների լիցքում գտնված քարե կամերին, որոնք թվագրվում են մ. թ. ա. XIV—XIII դդ.։ Միօրինակ քարե կամերի հայտնադրումը Սևանի և Զանգեզուրի լեռներում, որոնց հետ գտնվել են նաև այլ երկրագործական առարկաներ, ցույց է տալիս, որ Հայաստանում մինչև փայտե կամերի առաջանալը օգտագործվել են քարե կամեր, որոնք թվագրվում են մ. թ. ա. II հազարամյակի կեսերով[6]։

Զանգեզուրում գտնված նյութերից ուշագրավ է հնագույն քարե կուռքը, որը հայտնաբերվել է Ցայջիում և պահպանվում է Գորիսի թանգարանում։ Կուռքն ունի 76 սմ բարձրություն և կոտրված է վզի ներքևի մասից, երեք դեմքերի մակերեսների վրա կան վնասվածքներ, հինգ դեմքերի քթերը՝ ջարդված, բոլոր գլուխների վերևի մասը՝ կտրված։ Կլոր անցքերով ընդգծված են աչքերը, իսկ բերանը կլոր գծիկով։ Մեկ դեմքանի նման կուռք հայտնի է Մեծամորում։ Ըստ Լ. Ա. Բարսեղյանի այդ կուռքերը թվագրվում են մ. թ. ա. XIII—XII դդ., իսկ ըստ Հ. Ա. Մարտիրոսյանի՝ մ. թ. ա. XIII—VIII դդ.[7]։ Պետք է նշել, որ

---

[5] А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ер., 1964 стр. 151.

[6] С. А. Есаян, А. А. Шагинян, Археологические находки в Зангезуре («Советская Археология», 1962, № 3, стр. 199).

[7] Լ. Բարսեղյան, Ուշ բրոնզի մի քանի նորահայտ պաշտամունքային հուշարձաններ («Պատմա-բանասիրական հանդես», 1962, № 2, էջ 258), А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы... стр. 180.

նույն գյուղում 1964 թ. հայտնաբերվել է մի այլ քարե արձան. դա ոչ այնքան կատարյալ բավական խոշոր տղամարդու գլուխ է։ Դեմքը հարթ է, խոշոր, ուղիղ քթով, բերանը՝ խոր, ուղիղ ճեղքով։ Պարզ երևում են հոնքերը և կլոր փոսիկներով արված աչքերը, մազերի լայն շերտով դեպի հետ տարված սանրվածքը։ Գլուխը ընդհանուր տեսքով բավական արտահայտիչ է և կարծես ինչ-որ իշխանավորի քանդակ լինի։ Այն հրատարակել է Բ. Ն. Առաքելյանը՝ թվագրելով մ. թ. II—III դդ.[8]։ Ենթադրելի է, որ այն ավելի վաղ շրջանի պետք է լինի։

Բացի նշված նյութերից Գորիսում շինարարական և հողային աշխատանքների ժամանակ գտնվել են ոչ մեծ թվով դաշույններ, նիզակներ, դանակներ, տարբեր զարդեր և խեցեղեն անոթներ, որոնք հիմնականում վերաբերում են մ. թ. ա. I հազարամյակի սկզբին։

Վերջին տարիներին մի շարք նոր հուշարձաններ են հայտնաբերվել Ղափանի շրջանում։ Դավիթ-Բեկ ավանի մոտ 1959 թ. ջրատար անցկացնելիս բացվեցին երկու քարարկղային դամբարաններ, որոնք ուսումնասիրվել են մեր և Ա. Շահինյանի կողմից։ Առանձնապես հետաքրքիր են խեցեղեն առարկաները, որոնք պահվում են Հայաստանի Պետական պատմական թանգարանում[9]. Գտնվել են ատամնավոր բռնակներով փոքրիկ գավաթներ, որոնք նախկինում հայտնի էին Ե. Լալայանի պեղումներից՝ Ն. Բայազետում և Հումելի պեղումներից՝ Ղուշչիում։ Գտնվել են նաև ոլորված կանթերով մի քանի սափորներ և սկահակներ՝ (նկ. 5), նման մ. թ. ա. I հազարամյակի սկզբով թվագրվող Աստդի-բլրի դամբարանադաշտի նույնատիպ անոթներին։ Հայտնաբերվել են նաև տարբեր քրեղաններ, որոնք իրենց համեմատականներն ունեն մ. թ. ա. I հազարամյակի սկզբի հուշարձաններում՝ Լենինականում, Կարմիր-բերդում, Դիլիջանում և այլուր։ Ջափազանց հետաքրքիր է կլոր անցքի միջոցով իրար միացած երկու «ճտքավոր կոշիկների» ձև ունեցող անոթը (նկ. 6)։ Դավիթ-Բեկում գտնված կոշիկների զուգահեռներն են Հասանլուում (Իրան) գտնվածները, որոնք նույնպես զույգ են և ուղեկցվում են նույնօրինակ սկահակով[10]։

1960 թ. Քաջարանում տեղի բնակիչ Ա. Աբրահամյանը գտել է չորս կավակերտ կոշիկներ, որոնք ունեն փափուկ կոշիկի ձև և փողաձև լայնացող ճտքեր[11]։

Քաջարանից գտնված կոշկաձև անոթների ժամանակը որոշելիս կարևոր են դրանց ուղեկցող փոքրիկ, երկիրան սափորիկները, որպիսիք հայտնի են Թարիայի դամբարանից, Կարմիր-բլուրի նախաուրարտական շերտից, Դվինից, Աշտարակից և այլ վայրերից, որոնք թվագրվում են մ. թ. ա. II հազարամյակի վերջով և I հազարամյակի սկզբով։

Այդպիսով՝ Քաջարանից և Դավիթ-Բեկից գտնված իրերը կարելի է թվագրել մ. թ. ա. I հազարամյակի սկզբով։

«Կոշկաձև» անոթների մասին գիտության մեջ կան տարբեր կարծիքներ։ Ուսումնասիրողների մի խումբ (Հ. Ի. Մաքսիմովա, Ա. Ա. Իսսեն և այլք) գտնում են, որ դրանք օգտագործվել են պաշտամունքային արարողությունների ժամանակ։ Պատտերը գտնում է, որ դրանք օգտագործվել են կենցաղում և

---

8 Բ. Ն. Առաքելյան, Քանդակագործությունը հին Հայաստանում («Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 1, էջ 60)։

9 Ս. Ա. Եսայան, Ա. Ն. Շահինյան, նշվ. աշխ., էջ 202։

10 L. V. Berge, Archeologie de l'Iran ancien leiden 1959, таол, 146.

11 Հ. Ա. Մարտիրոսյան, նշվ. աշխ., էջ 149։

որ դրանց ձևը պատահական է։ Գ. Ի. Իոնեն գտնում է, որ դրանք օգտագործվել են թաղման ծեսերի ժամանակ[12]։

Ավելի հավանական է Ս. Ի. Մաքսիմովայի և Ա. Իսսեսնի կարծիքը։ Իբրև լրացուցիչ փաստ կարելի է ասել, որ Կարմիր-բլուրի «կոշիկները» գտնվել են ամրոցի պահեստներից մեկում, իսկ Թմբատիրում՝ պաշտամունքային օջախի մոտ։ Պարզ է, որ այդ կոշիկները ինչպես և տարբեր սիմվոլիկ նշաններով դարդարված աղորիքները, խոցիները, շերեփները, որոնք գտնվել են Հայաստանի տարբեր վայրերում, նույնպես օգտագործվել են այս կամ այն նպատակով։

Խոսելով պաշտամունքային առարկաների մասին, հարկ է անդրադառնալ նաև Զանգեզուրում գտնված մի քանի այլ առարկաների։ Դրանցից մեկը սնպաձև անցքերով զարդարված բրոնզե քառակող հենակ է, որի կենտրոնից բարձրանում է գլխիկով պտուտակաձև ձող։ Հենակի չորս կողմերից բարձրանալով, գեղեցիկ, կոր վզերով դեպի դուրս են թեքվում ձիերի գլուխներ[13], որոնք ձուլված են մոմե կաղապարի օգնությամբ և պարզ երևում են գլխի մանրամասները՝ ականջները, աչքերը, բերանը։ Զուլող վարպետին հաջողվել է ստեղծել ձիերի հոյակապ քանդակներ, որոնք վկայում են նրա բարձր վարպետության մասին։ Նշված արձանիկը գտնվել է պատահաբար, հողային աշխատանքների ժամանակ, առանց այլ նյութերի, մի բան, որը դժվարացնում է դրա թվագրությունը։ Ըստ երևույթին, այն ուշ բրոնզից վաղ երկաթին անցնելու ժամանակաշրջանի է։ Այդ մասին են խոսում նրա պատկերագրական առանձնահատկությունները, ինչպես և սնպաձև անցքերի առկայությունը, որոնք բնորոշ են նշված ժամանակների նախաշազարդմանը։

Հազվադեպ գյուտերի թվին է պատկանում 1951 թ. Ղափանի շրջանի Սղնակ գյուղում հողային աշխատանքների ժամանակ գտնված առյուծի բրոնզե մասսիվ արձանը, որը պահվում է Գորիսի գավառագիտական թանգարանում։ Այն նստած առյուծ է (երկարությունը՝ 20, բարձրությունը՝ 13 սմ) առջևի ձգված և ետևի ծալված թաթերով։ Քանդակագործը ստեղծել է զայրացած, բայց, դեռ հանգիստ նստած գիշատիչի պատկեր, որը նկատելի է ջղային շարժումով, մեջքի վրա գցած պոչով։ Ամբողջ քանդակը հզորության և ուժի մարմնավորում է[14]։ Նման, միայն չափերով ավելի փոքր, նստած առյուծի արձան գտել է Բառնեյը 1964 թ., Մուշից ոչ հեռու, Կավալդերե ամրոցում[15]։ Սղնակի և Մուշի արձանները սերտորեն կապվում են ուրարտական բարձրարվեստ քանդակագործության հետ և թվագրվում են Վանի թագավորության վերջին ժամանակով՝ մ. թ. ա. VII—VI դդ.։ Զանգեզուրի ուշ ժամանակաշրջանի հուշարձաններից աչքի են ընկնում Ղափանի շրջանի Արծվանիկ գյուղի մոտ գտնված մարդկանց արձանիկները, որոնք կապվում են Հայաստանում լայն տարածում գտած ֆալլուսային քանդակագործության հետ, իրենց տեսքով փոքր ինչ տարբերվում են մյուսներից և կազմում մի առանձին խումբ[16]։ Դրանց

---

12 Г. И. Ионе, Глиняные сосуды сапожки из Мингечаура. Материальная культура Азербайджана, вып. III, Баку, 1953, стр. 37.

13 Հ. Ռ. Իսրայելյան, Հայաստանի բրոնզե գստիների որսորդական տեսարանները («Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 2, աղ. 2, նկ. 1)։

14 Ս. Ա. Եսայան, Ա. Ն. Շահինյան, նշվ. աշխ., նկ. 4։

15 C. A. Burney, A first Season of ecfcavations at the urartian citaqel of Kavaldare, Anatolian Stadles, vol XVI, 1965, նկ. 98։

16 А. Н. Захаров, Кавказ, Малая Азия и эгейский мир. Труды секции археологии и исскуствоведения, вып. II, РАНИОН, М., 1928, стр. 34.

մի մասը (4 արձան) գոտկատեղում ունի սուր ձողիկներ, որոնք նման են Սարիղամիշում գտնվածներին[17]։ Գոտկատեղի ձողիկների առկայությունը հնարավորություն է տալիս ենթադրել, որ նրանք ամրացվել են ուղղահայաց հարթությանը։ Արձանների մյուս մասը (3 օրինակ) չունի ձողիկներ և կանգնած է փոքրիկ հենակների վրա[18]։ Բոլոր արձանները փոքր են (7—9 սմ բարձրությամբ), դեմքերը՝ ոճավորված տափակ, քիթը և ծնոտը խիստ՝ դուրս ցցված, աչքերը՝ ուռուցիկ, բերանը՝ կարճ գծիկ։ Արձանների մարմինները կլոր են, խիստ կամ թեթևակի ընդգծված ֆալերով։ Բոլոր արձանիկների աջ ձեռքերը ծալված են դեպի վեր, մի բան, որ Զախարովին հնարավորություն է տվել ենթադրել, որ դրանք կրել են ինչ-որ զենք։ Նրանք ձախ ձեռքերում կրում են կլոր և կոնաձև վահաններ։ Արձանների գլխներին կան սաղավարտներ. որոնք իրենց տեսքով բաժանվում են չորս տեսակի։ Երկու արձանիկների գլխին կան կոնաձև փոքրիկ կատարներով սաղավարտներ. որոնք հեռավոր նմանություն ունեն Լճաշենում հայտնաբերված սաղավարտների հետ։ Երրորդ արձանիկը կրում է կոնաձև սաղավարտ՝ նման ուրարտական և ասորական սաղավարտներին։ Չորրորդի գլխին նույնպես կոնաձև սաղավարտ կա, որը ավարտվում է բարձր ձողով։ Վերջին երեք արձանիկները կրում են սաղավարտներ, որոնք զարդարված են վեր բարձրացող մանգաղաձև երկու եղջյուրներով, որոնց միջով անցնում է փոքրիկ կատարաձև ելուստ։

Բոլոր արձանիկներն իրենց չափերով, պատրաստման եղանակով, վահանների և սաղավարտների ձևերով բավական ուշ ժամանակի են և պետք է թվագրվեն մ. թ. ա. I հազարամյակի կեսերով։ Հետաքրքիր է նշել, որ 1971 թ. Արծվանիկում գտնվել են մի փոքր ավելի վաղ շրջանի նյութեր[19] (տեղի բնակիչ Գ. Գրիգորյանի հողային աշխատանքների ժամանակ). մի քանի կավե անոթներ, սափորներ, մեծ, կլոր բռնակ ունեցող քրեղան, ուռուցիկ ելուստով, կլոր իրանով քրեղան։ Գտնվել են նաև բրոնզե զրահաշապիկի երկու կոճակներ՝ զարդարված կարճ գծիկներով, (նմանվում են Ղրղիում գտնվածներին) տարբեր ապարանջաններ, օղեր և սերղոլիկե ուլունքներ։ Այս իրերի մեջ հետաքրքիր է խոշոր բրոնզե թիթեղից պատրաստված ճակատակալը, որի ծայրերը ոլորված են կապելու համար։ Ճակատակալը զարդարված է եզրերով անցնող կարճ, թեք գծիկներով։ Նման ճակատակալներ Հայաստանում հայտնի են Ղափանից, Լճաշենից, Զոլաքարից, Աստղաձորից, Նորագուղից և այլ վայրերից, թվագրվում են մ. թ. ա. II հազարամյակի վերջով և I հազարամյակի սկզբով։ Արծվանիկի ճակատակալը թվագրվում է մ. թ. ա. IX—VIII դդ.։

Ղափանի Թեղուտ թաղամասի շինարարական աշխատանքների ժամանակ բացված քարարկղե դամբարաններից մի քանիսը 1968 թ. պեղվեցին Գ. Գրիգորյանի կողմից։ Հայտնաբերվեցին տարբեր պաշտամունքային կարմիր, սև և դեղին գույնի անոթներ՝ զարդարված տարբեր զծանախշերով և ձիերի ու օձերի պատկերներով։ Անոթների բռնակները զարդարված են ցուլերի և խոյերի գլուխ-

---

17 С. В. Бессонов, Бронзовые статуэтки из Саринкамыша, Изв. Института наук и искусств ССР Армении, Ереван, 1930, № 4, стр. 57—74.

18 Ա. Ն. Զախարովը հիշատակում է վեց արձանիկ, իսկ Գ. Գոյանը՝ յոթ, տե՛ս Ա. Ն. Զախարով, նշվ. աշխ., էջ 31—33 և Г. Гоян, Театр древней Армении, М., 1952, Т. I, рис. 35. Ա. Սամուելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հ. II, Եր., 1911, էջ 108։

19 Նյութերը պահվում են Հայաստանի պետական պատմության թանգարանում, դույլ № 2478։

ներով։ Գտնվել են նաև տարբեր մեկ և երկկանթանի, ինչպես և բաժակաձև սափորներ, տարբեր զարդեր, օձագլուխ և ատամնավոր ապարանջաններ, ուլունքներ և այլն։ Գտնված իրերի այս խումբը, ըստ Գ. Գրիգորյանի, թվագրվում է մ. թ. ա. VII—V դդ.։ Նույն ժամանակով են թվագրվում նաև Շիկահող գյուղի մոտ գտնված նյութերը, որտեղ Գ. Գրիգորյանի կողմից հայտնաբերվել են տարբեր խեցեղեն անոթներ, երկաթե կացիններ, դաշույններ և տարբեր զարդեր[20]։

Նույն 1968 թ. Լափան-Գեղանուշ ճանապարհի շինարարության ժամանակ հանապարհաշինարար Լ. Մովսիսյանը բացել է քարարկղային դամբարան, որը ծածկված է եղել մոտ 1,5 մ հաստության հողաշերտով։ Դամբարանում հայտնաբերվել են մարդկային երկու կմախք (մեծը տղամարդու, փոքրը՝ կնոջ)։ Տղամարդու կմախքի կրծքին հայտնաբերվել է մեկ բրոնզե դաշույն, իսկ կողքին՝ բազմաթիվ կավանոթներ։ Հնագետ Ռ. Թորոսյանին հաջողվեց հավաքել գտնված նյութերը և պեղել ևս մեկ դամբարան[21], որտեղ բացվել է համայնքի շարքային բնակչի՝ սակավաթիվ կավանոթներով ուղեկցվող թաղում (նկ. 7)։ Առաջին հարուստ դամբարանը Ռ. Թորոսյանի ենթադրությամբ պատկանելիս է եղել քրմապետին և նրա հետ թաղված կնոջը։

Այստեղ գտնված կավանոթները հիմնականում պաշտամունքային բնույթի են։ Իրերի մեջ աչքի է ընկնում ցուլակերպ անոթը, որի նմանները կան Լեռնային Ղարաբաղում, Նախիջևանում, Մինգեչաուրում և ռուսական ու պարսկական թալիշներում[22]։ Հետաքրքիր են երկու և երեք վզով սափորները, երկար ծորակով անոթները և ճրագաձև պաշտամունքային անոթները։ Դրանք զարդարված են տարբեր երկրաչափական նախշերով։ Մի քանիսի վրա պահպանվել են պաշտամունքային նշաններ։ Այսպես՝ մեկ սափորի վրա կան երեք տիեզերական հորիզոնների նշաններ, որոնք պատկերում են երկինքը, երկիրը և ջուրը, մյուսի վրա կան երեք խաչեր, որոնք կապվում են պտղաբերության պաշտամունքի հետ։ Այս յուրահատուկ և հարուստ նյութերը վերաբերում են տեղական մշակույթին և թվագրվում են մ. թ. ա. VII—VI դդ.։

1970—1971 թթ. Օ. Խնկիկյանը Ղափանի Շիկահող և Բաղաբուրջ գյուղերում հայտնաբերել է տարբեր ժամանակաշրջանի խեցեղեն, ճակատակալներ, դաշույններ, նիզակներ ու ապարանջաններ, որոնք վերաբերում են մ. թ. ա. XII—XI դդ.։ Կան նաև Դավիթ-Բեկի հնավայրում հայտնաբերվածի տիպի խեցեղենի բեկոր, ապարանջաններ, ճարմանդներ, մ. թ. ա. VI—V դդ. տարբեր խեցեղեն և ապարանջաններ։ Օ. Խնկիկյանը պեղումներ է կատարել նաև Քաջարանի մոտ և գտել բրոնզե սակր՝ նման Շիկահողից հայտնաբերվածին։ Շիկահողից հայտնաբերվել էին նաև խեցեղեն անոթներ և սվաստիկայով զարդարված բրոնզե ճակատակալ։ Այդ նյութերը թվագրվում են մ. թ. ա. III հազարամյակի վերջերով և I հազարամյակի սկզբով։

Ավելի ուշ շրջանի նյութեր հայտնի դարձան Սիսիանում 1970 թ. նոյեմբերին Զոհաբերություն կոչվող բլրի ստորոտին պատահականորեն բացված հարուստ դամբարանից։ Բ. Առաքելյանը, Ժ. Խաչատրյանը և Թ. Խաչատրյանը

20 Թեղուտում և Շիկահողում գտնված նյութերը չեն հրատարակված և պահվում են Ղափանի գավառագիտական թանգարանում։

21 Նյութերը պահվում են Հայաստանի պետական պատմական թանգարանում (տե՛ս «Սովետական Հայաստան», 4. II. 1969)։

22 J. De Morgan, Mission scientifique au Caucase, t. I, Paris, 1889, էջ 121։

այստեղ հայտնաբերել են մի շարք այլ նյութեր[23]։ Դամբարանում գտնվել են բրոնզե շքեղ պատդարակի մասեր, ոչ մեծ թվով խեցեղեն, արծաթե թասեր, ոսկե զարդեր, արծիվների պատկերներով զարդարված արծաթե մեդալիոններ, կանացի ղլուխ, դավազանի ոսկրե դլխիկ, ապարանջաններ, որոնցից մեկը զարդարված է առյուծի ղլխիկով, կախիկներ, օղեր, մատանիներ և քարե և ապակե ակներ։

Հնագետներին հաջողվեց պարզել դամբարանի կառուցվածքը, գտնել մի շարք նոր նյութեր։ Դամբարանն ունեցել է կոնաձև քարե ծածկ։ Դամբարանի արտաքին կողմից հողի մակերեսին գտնվել են հում աղյուսի փուլածք, մոխրի և տարբեր խեցեղենի բազմաթիվ բեկորներ։ Գտնվել են նաև երկու սյան բաղաներ, որոնք վկայում են, որ դամբարանն ունեցել է նաև վերերկրյա հուշարձան։ Դամբարանի ներսում հայտնաբերվել է 1,5×0,57×0,6 մ³ չափերով օվալաձև խոշոր սարկոֆագ իր կափարիչով՝ պատրաստված թրծած կավից, զարդարված երեք ուռուցիկ դոտիներով։

Գտնվեցին նաև պատդարակ-բաղմոցի մանր մասեր, երկաթե նիզակներ, նետեր, դանակներ, կավանոթներ, ոսկե տարբեր զարդեր, դավազանի գլխիկ, մատանիներ, ականջի օղեր, մարդու ղլխի քանդակ, տարբեր ուլունքներ, կոճակներ, մարդու և արջի պատկերով կնիք և այլ նյութեր։ Առանձնապես կարևոր էին մեկ ոսկյա և 12 արծաթյա դրամները, որոնցով միայն կարելի է թվագրել դամբարանը։

Ուսումնասիրողների կարծիքով՝ այն եղել է Սյունիքի իշխանավորներից կամ քուրմերից մեկի տոհմական դամբարանը, որի նյութերը կարևոր նշանակություն ունեն ուշ անտիկ ժամանակաշրջանի մշակույթը և հատկապես արվեստը ուսումնասիրելու համար։

Հետաքրքիր է նշել, որ նյութերը մաքրելիս, վերականգնող Վ. Ղազարյանին հաջողվեց արծաթե թասերից մեկի վրա նկատել արամեական արձանագրություն, որն ըստ Ա. Փերիխանյանի ընթերցման հետևյալն է. «Այս թասը պատկանում է Արախսզատին»։ Արծաթի քաշն է 100 դրախմա[24]։ Խոսելով արամեական արձանագրության մասին, պետք է նշել, որ մի այլ արձանագրություն գտնվել է 1964 թ. ճանապարհաշինության ժամանակ, Իշխանասար լեռան ստորոտին։ Այն Արտաշես I-ի սահմանագծային արձանագրություններից է և ընթերցվել է Ա. Գ. Փերիխանյանի կողմից[25]։

Զանգեզուրում գտնվել են նաև մի շարք այլ իրեր, որոնք պահվում են տեղի թանգարաններում և Հայաստանի պետական պատմական թանգարանում։ Հայտնաբերված հնագիտական նյութերը հնարավորություն են տալիս նշմարելու նյութական մշակույթի հաջորդական զարգացումը՝ սկսած մ. թ. ա. III հազարամյակից մինչև մեր թվականության սկիզբը։

Զանգեզուրի հնագիտական սիստեմատիկ ուսումնասիրությունը դարձել է հրատապ անհրաժեշտություն, քանի որ այնտեղ մինչև այժմ հայտնաբերված հարուստ նյութերը, որոշակի զուգահեռներ ունեն Հայաստանի այլ շրջանների և իրանական բարձրավանդակի մշակույթի հետ։

---

23 Բ. Առաքելյան, Թ. Խաչատրյան, Ժ. Խաչատրյան, Սիսիանում բացված դամբարանի մասին («Սովետական Հայաստան», 18. V. 1971)։

24 А. Г. Периханян, Араменская надпись на серебрянной чаше из Зангезура («Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 3, էջ. 80)։

25 А. Г. Периханян, Арамейская надпись из Зангезура («Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 4, էջ 107)։



Նկ. 1. Գավազանի գլուխ

Նկ. 2. Եղջերուի բրոնզե արձան

Նկ. 3. Կրաքարե սանդ

Նկ. 4. Քարե կամ

Նկ. 5. Խեցեղեն Դավիթ-Բեկից

Նկ. 6. Ճակավոր կարճ կոշիկ

Նկ. 7. Կավե սափոր

Զանգեզուրի ուսումնասիրության համար անհրաժեշտ է զուգորդել գիտական համապատասխան կազմակերպությունների և հասարակության ջանքերը, այլապես ծավալվող շինարարական աշխատանքների հետևանքով շատ հուշարձաններ դատապարտված են ոչնչացման և կարող են գիտության համար առհավետ կորչել։

К ВОПРОСУ ОБ АРХЕОЛОГИЧЕСКОМ ИЗУЧЕНИИ ЗАНГЕЗУРА

С. А. ЕСАЯН

Резюме

Зангезур является одним из малоизученных в археологическом отношении районов Армении. Небольшие раскопки, произведенные М. С. Асратяном, А. О. Мнацаканяном, О. С. Хнкикяном, С. А. Есаяном. Р. М. Торосяном и Г. М. Григорьяном, а также случайные находки выявляют богатую материальную культуру, относящуюся к эпохам от ранней бронзы до ранне-армянского времени.

Обнаруженные материалы, часть которых ждет публикации, имеют большую общность с материальной культурой других районов Армении, бронзы до ранне-армянского времени.